ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

115
(3146)

2 սեպտեմբերի երեքշաբթի 2025
տպագրության ԺԴ տարի

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԻՆՉ ՈՐՈՇՈՒՄ ԿԿԱՅԱՑՆԻ ԴԱՏԱՎՈՐԸ



«Ժողովուրդ» օրաթերթի՝ իրավապահ համակարգում ունեցած վստահելի աղբյուրների փոխանցմամբ, ՀՀ Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի՝ կոռուպցիոն հանցագործությունների քննության մասնագիտացմամբ դատավոր Ժենյա Մելիքսեթյանը, ամենայն հավանականությամբ, ուժի մեջ կթողնի բարերար Սամվել Կարապետյանի նկատմամբ կիրառված կալանքի որոշումը:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ սեպտեմբերի 8-ին նախատեսված է Սամվել Կարապետյանի բողոքի քննությունը գրավոր ընթացակարգով:

Սակայն իրավաբանների պնդմամբ, պատճառը ոչ թե այն է, որ Կարապետյանի նկատմամբ հարուցված քրեական վարույթը կուռ եւ հիմնավոր է, այլ այն, որ ակնհայտորեն կա քաղաքական հրահանգ, որն արդեն ստացել է դատական համակարգը՝ ֆեյսբուքյան համապատասխան ուղերձներով ու ցուցումներով:

«Ժողովուրդ» օրաթերթը նաեւ իր իրազեկ աղբյուրներից տեղեկացավ, որ նախկինում գործավար, այսօր դատավոր Ժենյա Մելիքսեթյանի ամուսինը պետական համակարգի ծառայող է, ինչը դատարանին դնում է հատկապես զգայուն դիրքում: Այլ կերպ ասած՝ դատարանից այլ որոշում ակնկալել գրեթե անիրատեսական է, երբ գործ ունենք իշխանության կողմից ուղարկված «քաղաքական ՍՄՍ»-ի հետ:

Հիշեցնենք, որ Սամվել Կարապետյանի նկատմամբ քրեական հետապնդումը սկսվեց այն բանից հետո, երբ վերջինս 2024 թվականի հունիսի 17-ին Էջմիածնում 2 րոպեանոց ուղերձով հանդես եկավ՝ հայտարարելով. «Ի՞նչ կարծիք ես պետք է ունենամ, եթե մի փոքրիկ խմբակ, մոռանալով Հայոց պատմությունը, Հայ եկեղեցու հազարավոր տարիների պատմությունը, հարձակվել է հայ եկեղեցու, հայ ժողովրդի վրա: Քանի որ ես միշտ եղել եմ հայ եկեղեցու կողքին ու հայ ժողովրդի կողքին, ունենալու եմ անմիջական մասնակցություն: Եթե չհաջողվի քաղաքական գործիչներին, ուրեմն մենք էլ մեր ձեւով ենք մասնակցելու այդ ամենին»:

Այս հայտարարությունից ընդամենը ժամեր անց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հենց Ազգային ժողովի դահլիճից նստած ֆեյսբուքյան ստատուսներ եւ ՍՄՍ-ներ էր ուղարկում իրավապահ կառույցներին, որոնք, ըստ էության, պարունակում էին սպառնալիքներ: Նա իր ստատուսներից մեկով ուղղակի սպառնաց. «Հիմա ես քեզ իմ ձեւով կմիջամտեմ, ստահակ»:

Հետեւանքը երկար սպասել չտվեց՝ սկսվեց քրեական հետապնդում եւ Սամվել Կարապետյանը մինչ օրս կալանքի տակ է՝ միայն այդ խոսքերը արտաբերելու համար:

Իսկ վերաքննիչ ատյանի առաջիկա որոշման պատկերը, ըստ մեր իրավապահ աղբյուրների, գրեթե կանխորոշված է: Սամվել Կարապետյանը կշարունակի մնալ կալանքի տակ:

«Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի տնօրենի պաշտոնի համար այսօր հայտարարված մրցույթն ամբողջությամբ վերածվել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներքին պայքարի: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ոլորտի ամենահայտնի մասնագետներից մեկը՝ «Առողջության իրավունք» ՀԿ նախագահ Անուշ Պողոսյանը, որոշել է հրաժարվել մրցույթին մասնակցելուց: Պողոսյանը նախկինում մասնակցել էր Ֆանարջյանի անվան ուռուցքաբանական կենտրոնի տնօրենի մրցույթին, որի ժամանակ անգամ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը նրան բնութագրեց որպես պրոֆեսիոնալ մասնագետ: Սակայն այդ մրցույթում հաղթել էր ոչ թե մասնագիտական որակները, այլ քաղաքականապես նախընտրելի թեկնածուն: Այսպիսով՝ մրցավազքը մնում է երկու ՔՊ-ականների միջեւ՝ Նարեկ Ջեյնալյանի, որը «Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարն է, ԱԺ նախկին պատգամավոր, եւ Նարեկ Վանեսյանի, որը նախկինում եղել է հոգեկան առողջության կենտրոնի ղեկավար եւ հայտնի է սկանդալային անցյալով: Նա ՄԻՊ-ի աշխատակազմի հասցեին հնչեցրել էր սպառնալիքներ, թե «քայլեր կձեռնարկի», եթե չկատարեն իր պահանջներն ու իրենց տարածած հաղորդագրությունները նախապես չհամաձայնեցնեն իր հետ: Հաջորդը խարդախության գործն է, երբ Վանեսյանը 3000 ԱՄՆ դոլար էր վերցրել՝ քաղաքացուն աշխատանքի տեղավորելու խոստումով, սակայն ի վերջո խաբել է դիմորդին: Թեեւ նման փաստերով ցանկացած թեկնածու ինքնաբերաբար դուրս կմնար որեւէ մրցույթից, սակայն «Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ-ի տնօրենի պաշտոնի համար Վանեսյանը ոչ միայն մասնակցում է, այլեւ, ըստ որոշ աղբյուրների, համարվում է նախընտրելի թեկնածու՝ Արսեն Թորոսյանի եւ Անահիտ Ավանեսյանի հովանու ներքո:

«Ժողովուրդ» օրաթերթի իրազեկ աղբյուրները փոխանցում են, որ իրավապահների տեսադաշտում այս պահին հայտնվել են վարչական դատարանի մի քանի դատավորներ, եւ չի բացառվում, որ առաջիկայում նոր բացահայտումներ, անգամ՝ ձերբակալություններ լինեն: ArmLur.am-ը արդեն տեղեկացրել էր, որ Վարչական դատարանի դատավորների աշխատասենյակներում օգոստոսի 29-ին իրականացված խուզարկությունների դեպքով կան արդեն կալանավորվածներ: Մասնավորապես կալանավորվել է երկու անձ, որոնցից մեկը փաստաբան Արմեն Օհանյանն է: Ըստ մեր աղբյուրների՝ նախաքննական մարմինը կալանավորել է միջնորդին եւ կաշառք ստացողի օժանդակողին: Դատավորների վերաբերյալ քննչական գործողությունները դեռ շարունակվում են, իսկ գործը, մեր տեղեկություններով, հետաքրքիր զարգացումներ կունենա: Ավելի վաղ հայտնել էինք, որ իրավապահները խուզարկություններ են իրականացրել վարչական դատարանի դատավորներ Արգիշտի Ղազարյանի, Միհեր Պետրոսյանի եւ Լուսինե Բոյաջյանի աշխատասենյակներում: Մեր ունեցած տվյալներով՝ երբ Արգիշտի Ղազարյանը զբաղեցրել է վարչական դատարանի նախագահի պաշտոնը, իր մոտ է կանչել նշված դատավորներին եւ հանձնարարել որոշ գործերով քայլեր իրականացնել: Սակայն դատավորները չեն էլ կասկածել, որ այդ պահին Արգիշտի Ղազարյանի աշխատասենյակը ձայնագրվում է իրավապահների կողմից: «Ժողովուրդ»-ին հասած տեղեկությունների համաձայն՝ իրավապահների ուշադրությունը գրավել է այն հանգամանքը, որ դատավորները թաթախվել են հողերի սեփականության իրավունքի գրանցման կամ չեղարկման գործերում:

Ազգային ժողովի հայտնի Ոսկեզօծ դահլիճը այլեւս ոսկեզօծ չէ. այն պարզապես նորաձեւ եւ մոդեռն վերանորոգմամբ մի սովորական դահլիճ է՝ զրկված անցյալի պատմությունից եւ դիզայնից: Ամառային արձակուրդներին Ազգային ժողովը դարձել էր մեծ շինհրապարակ. վերանորոգվում էին Ոսկեզօծ դահլիճը, Փոքր դահլիճը եւ Փոքր դահլիճին կից նախասրահը: «Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրել է ԱԺ գնումներն ու արձանագրել է, որ այս դահլիճների վերանորոգման համար վճարվել է շուրջ 50 մլն 988 հազար դրամ՝ գրեթե 133 հազար ԱՄՆ դոլար: Այս գումարը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը: Ըստ պայմանագրի՝ իրականացվել է հաճարե մանրահատակի մաքրում, հղկում՝ ձեռքի էլեկտրական գործիքով, նաեւ նույն հատակի ներկում ջրասոսնձաէմուլսիոն նյութով: Կատարվել է կախովի առաստաղի մոնտաժում, ներկում, 4 փայտե շրջանակով պատուհանների կազմաքանդում, նույնի վերանորոգում եւ վերատեղադրում ու այլ աշխատանքներ: Թվում է, թե ոչինչ չկա, սովորական գնում է, սակայն տարիների պատմություն ունեցող Ոսկեզօծ դահլիճը, որը սլավոնական, նապոլեոնյան ռոկոկո-բարոկո ոճի վերանորոգում էր հիշեցնում, այլեւս չի առանձնանա իր ինքնատիպությամբ:

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՑ ԳՈՂԱՑՎԱԾ ԳՐՔԵՐԻ ԱՌԵՂԾՎԱԾԸ

ԻՆՉ Է ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒՄ ՆԱԽԿԻՆ ՏՆՕՐԵՆԸ

2007 թվականին ՀՀ ֆինչական կոմիտեում հարուցվել էր քրեական գործ. Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտից անհետացել էին մի քանի արժեքավոր գրքեր:

Վարույթի շրջանակում հարցաքննվել էին գողության կասկածյալներից ներկայումս ԱԳՆ նախարար Արարատ Միրզոյանը եւ նրա սանիկ, պատգամավոր Վլադիմիր Վարդանյանը:

ArmLur.am-ը թանգարան-ինստիտուտում կատարված գողության եւ Հայոց ցեղասպանության՝ որպես պատմական իրողության դեմ ուղղված ոտնձգությունների վերաբերյալ զրուցել է Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի նախկին տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր Հայկ Դեմոյանի հետ:

-Պարոն Դեմոյան, Նիկոլ Փաշինյանը օրերս ճեպազրույցի ժամանակ անդրադարձավ Հայոց ցեղասպանության զոհերի հաշվառման թեմային եւ կրկին առաջ քաշեց իր թեզերը՝ միջազգային հանրության կողմից ցեղասպանության չճանաչման մասին: Ինչպե՞ս կմեկնաբանեք նրա հայտարարությունները:

-Նիկոլ Փաշինյանին մեկնաբանելու կարիք գրեթե չկա. նրա վերաբերմունքը բոլորին վաղուց պարզ է: Պարզապես հիշեցնեմ՝ սա առաջին դեպքը չէ, որ նա նման «օրիգինալ» հայտարարություններ է անում: Կարծում եմ՝ նա ամենավերջին մարդն է, որը կարող է խոսել Հայոց ցեղասպանության մասին, անդրադառնալ զոհերի հիշատակին կամ Ծիծեռնակաբերդի հուշահամալիրին: Ասածս հիմնավորում եմ նրա եւ նրա թիմակիցների կատարած քայլերով՝ Ծիծեռնակաբերդում ցուցաբերած ոչ պատշաճ վերաբերմունքով եւ ցեղասպանության պատմական ժխտումներով: Վերջիվերջո, նա բաց տեքստով հայտարարեց, եւ դա արձանագրվեց, որ հանցավոր համաձայնության է եկել Իլհամ Ալիեւի հետ՝ ընդունելով, թե Ղարաբաղյան հարցի լուծումն ու իր պատկերացրած խաղաղությունը պետք է հաստատվեն էթնիկ զտման եւ ցեղասպանության արդյունքում:

-Այսինքն՝ ինչպես միշտ, Փաշինյանի հայտարարությունները ուղղորդվա՞ծ են դրսից եւ արված են հաճոյանալո՞ւ նպատակով:

-Այո, շատերն արդեն գիտեն, որ Նիկոլ Փաշինյանը դարձել է ընդամենը Ալիեւի «փոխանցող գործիքը»: Նրա միջոցով հարված է հասցվում ազգային արժեքներին, ժխտվում եւ արժեզրկվում է Ցեղասպանության հարցը: Վարչապետը իրեն վերապահում է պատմաբանի կամ ցեղասպանագետի դեր եւ անգամ հայտարարում, թե դեռ պետք է պարզել՝ պատմական ճշմարտությունները «ճի՞շտ» են ներկայացված, թե՞ «սխալ»: Միաժամանակ նույն վարչապետը վերջերս խոստովանեց, որ ինքը պատմության մասնագետ չէ: Այս հակասությունները միայն հաստատում են իմ ասածը:

-Պարոն Դեմոյան, խոսելով Հայոց ցեղասպանության մասին՝ չենք կարող չանդրադառնալ այն բացահայտումներին, որ դուք արեցիք ինստիտուտում գրքերի գողության գործով: Ի՞նչ կպատմեք այդ աղմկահարույց դեպքի մասին:

-Խոսքը վերաբերում է 2004-2005 թվականներին: «Լինսի» հիմնադրամի վերանորոգման ընթացքում՝ նախկին տնօրեն Լավրենտի Բարսեղյանի օրոք արձանագրվեց գրքերի կորուստ: Գրքերը գրադարանից տեղափոխվել էին այլ սենյակ, որից հետո պարզվեց, որ 19 արժեքավոր գրքեր, ձեւակերպենք այսպես՝ բացակայում են: Երբ երկու տարի անց ես դարձա տնօրեն, եղելությունից տեղյակ չէի: Այդ ժամանակ արդեն նախկին տնօրեն Լավրենտի Բարսեղյանին նշանակեցին խորհրդական, փոխտնօրենը մնաց իր պաշտոնում: Աշխատակիցներից տեղեկացա, որ գողություն է կատարվել, իսկ նախկին ղեկավարությունն էլ հրաժարվում է գալ՝ ընդունում-հանձնում իրականացնելու: Սա աննախադեպ երեւույթ էր:

Ես անմիջապես նախաձեռնեցի քրեական գործ հարուցել. դա 2007 թվականն էր: Այդ գործի շրջանակում ուսումնասիրվեց գրքերի կորստի հանգամանքը: Իմ ունեցած տեղեկություններով՝ կազմակերպված հանցագործության բաժնի աշխատակիցները մի քանի անգամ հարցաքննության էին տարել նաեւ թանգարանի ասպիրանտներին: Բարսեղյանը անգամ ինձ զանգեց ու վրդովված ասաց, թե ինչու եմ քրեական գործ հարուցել այդ գրքերի կապակցությամբ, եւ որ գրքերը գողացվել են: Նա փորձեց հասկացնել, որ գողության գործում ներգրավված են եղել ասպիրանտները: Այդ տարիներին թանգարանն ուներ մի քանի ասպիրանտ, որոնցից երկուսին ես հետագայում պիտի ճանաչեի՝ Վլադիմիր Վարդանյանին (ներկայում ԱԺ պետահրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ) եւ Արարատ Միրզոյանին (նախկինում ԱԺ նախագահ, այժմ ԱԳՆ նախարար):

Նրանց հարցաքննել են: Իմ ունեցած կցկտուր տեղեկությունների համաձայն՝ Արարատ Միրզոյանը փորձել է գողության մեղքը բարդել թանգարանի աշխատակցուհիներից մեկի վրա: Սակայն փաստ է, որ գողոնը մինչ օրս չի հայտնաբերվել:

Նույն թվականի նույն ամսին, երբ գործով հարուցվել էր վարույթ, մենք հետագայում տեսնում ենք մի փաստաթուղթ որը հրապարակվել է Միքայել Մինասյանի կողմից. այն Արարատ Միրզոյանին հավաքագրելու վերաբերյալ փաստաթուղթն էր:

Հետագա շահարկումներից խուսափելու համար պետք է ասեմ՝ ես, իհարկե, հարգում եմ անմեղության կանխավարկածը, բայց ունեմ լուրջ կասկածներ, որ չպատժվելու դիմաց Արարատ Միրզոյանն ու Վլադիմիր Վարդանյանը հավաքագրվել են ԱԱԾ-ի կողմից: Հետագայում նրանց ներգրավեցին այն գործողությանը, որն անվանվեց «Թավշյա, ոչ բռնի հեղափոխություն»:

Զրուցեց ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ԱԲ-Ի ԽՈՇՈՐ ՏՎՅԱԼԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ԿՍՏԵՂԾՎԻ

Երեկ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Մխիթար Հայրապետյանը հանդիպում է ունեցել Firebird ընկերության համահիմնադիր Ալեքսանդր Եսայանի հետ: Այդ մասին հայտնում են նախարարությունից:

Ալ. Եսայանը ներկայացրել է Հայաստանում արհեստական բանականության խոշոր տվյալային կենտրոնի ստեղծման նախագծի արդեն իսկ կատարված աշխատանքները, նաեւ քննարկվել են իրականացման ճանապարհին առաջացած ռազմավարական եւ տեխնիկական հրատապ խնդիրները: Մասնավորապես, անդրադարձ է կատարվել վերջնական վայրի օպտիմալ ընտրության, այդ վայրի ենթակառուցվածքների եւ էլեկտրաէներգիայի կայուն մատակարարման ապահովմանն ուղղված ընթացիկ հարցերին:

Քննարկման ընթացքում նախարար Հայրապետյանը կարեւորել է ծրագրի հաջող իրականացման համար անհրաժեշտ աշխատանքների համակարգված իրականացումը՝ ընդգծելով խոշոր տվյալային կենտրոնի նշանակալի դերը Հայաստանի տեխնոլոգիական էկոհամակարգի զարգացման գործում:

Նշենք, որ այս ծրագրով նախատեսվում է շուրջ 500 միլիոն ԱՄՆ դոլարի ներդրում, հազարավոր NVIDIA Blackwell GPU-ների տեղակայում եւ ավելի քան 100 մեգավատ հզորությամբ ենթակառուցվածքի ձեւավորում:

Ամփոփելով քննարկումը՝ կողմերը գտել են լուծումներ, ձեռք են բերել պայմանավորվածություններ՝ նախագծի բարեհաջող իրականացման ուղղությամբ:

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՎԵԼ ԵՆ

Արեն Մկրտչյանի պատգամավորական լիազորությունները դադարեցվել են: Այս մասին տեղեկանում ենք Ազգային ժողովի կայքից:

Հիշեցնենք, որ Փաշինյանը Կառավարության նիստից հետո տեղի ունեցած ճեպազրույցի ընթացքում խոսեց կադրային փոփոխություններից՝ մասնավորապես նշելով նաեւ, որ Արեն Մկրտչյանը կնշանակվի Լոռու մարզպետ:

«ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ» ՎՏԱՆԳՈՒՄ Է ՀՀ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ցեղասպանության կանխարգելման Լեմկինի ինստիտուտը նախազգուշացնում է, որ Սպիտակ տանը նախաստորագրված Հայաստան-Ադրբեջան խաղաղության պայմանագիրը վաղաժամ է ներկայացվում որպես առաջընթաց:

Ինստիտուտի գնահատմամբ՝ այն սպառնում է ամրապնդել Ադրբեջանի նվաճողական օրակարգը եւ ճանապարհ հարթել նոր ցեղասպանական գործողությունների համար:

Օգոստոսի 8-ին ստորագրված Հայաստանի, Ադրբեջանի եւ Ամերիկայի Միացյալ Նահանգների համատեղ հռչակագիրը եւ նախաստորագրված պայմանագիրը խոստանում են տարածքային ամբողջականության փոխադարձ ճանաչում, սահմանի սահմանազատում եւ առեւտրային ուղիների բացում, այդ թվում՝ «Թրամփի ճանապարհի» միջոցով: Սակայն Ինստիտուտը պնդում է, որ սա խաղաղության վաղաժամ տոնակատարություն է, մինչդեռ Ադրբեջանի վերջին հանցագործությունները եւ ռազմատենչությունը մնում են անպատասխան: Առանց Հայաստանի ինքնիշխանությունը պաշտպանող մեխանիզմների՝ այս գործարքը կարող է ճանապարհ բացել նոր պատերազմի:

Մեծ մտահոգություն է նաեւ Հայաստանի հնարավոր համաձայնությունը՝ հրաժարվելու միջազգային դատարաններում Ադրբեջանի դեմ գործերից, որոնք, ըստ Ինստիտուտի, միակ իրավական մեխանիզմներն են ճշմարտությունն ու հաշվետվությունը ապահովելու համար:

Հրաժարումը կնշանակի արդարության մերժում Արցախի ավելի քան 100,000 տեղահանվածների համար:

Լեմկինի ինստիտուտը դատապարտում է նաեւ Ադրբեջանի պահանջը՝ փոխել Հայաստանի Սահմանադրությունը՝ դա համարելով միջամտություն ներքին գործերին:

Լեմկինի ինստիտուտը կնքված պայմանագիրը համեմատում է 1938 թվականի Մյունխենի գործարքի հետ՝ այն անվանելով խաղաղեցում «ցեղասպանական բռնապետության հանդեպ»:

Հայտարարությունում հիշեցվում են Ալիեւի հայատյաց հայտարարությունները, գերիների շարունակվող բանտարկությունը եւ հրադադարի խախտումները: Ինստիտուտը հորդորում է Ամերիկայի Միացյալ Նահանգներին պահանջել Ադրբեջանի կողմից կոնկրետ քայլեր՝ գերիների ազատում, հակահայ կրթության ու հռետորաբանության վերացում, «Արեւմտյան Ադրբեջանի» դոկտրինի չեղարկում եւ Արցախի ապագայի շուրջ իրական բանակցություններ:

Առանց այս երաշխիքների, ըստ Ինստիտուտի՝ ներկայիս «խաղաղության գործընթացը» կխորացնի անպատժելիությունը:

«Իսկական խաղաղությունը պահանջում է արդարություն, հաշվետվություն եւ ինքնության պաշտպանություն, այլապես վտանգված է Հայաստանի Հանրապետության գոյությունը»,- ասվում է հայտարարությունում:

ԱԼԻԵՎԸ՝ «ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՄԻՋԱՆՑՔԻ» ՄԱՍԻՆ

«Զանգեզուրի միջանցքը» շուտով կդառնա Միջին միջանցքի,ինչպես նաեւ Հյուսիս-Հարավ միջանցքի եւս մեկ կարեւոր հատված, որը կամրապնդի խաղաղությունն ու բազմակողմ գործընկերությունը: APA-ի փոխանցմամբ՝ այս մասին հայտարարել է Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը:

«Զանգեզուրի միջանցքը» օգուտ կբերի Ադրբեջանի բոլոր մոտիկ եւ հեռավոր հարեւաններին, որոնք գտնվում են երկրի սահմաններից արեւելք, արեւմուտք, հյուսիս եւ հարավ»,- ասել է նա:

ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ

Ռուսաստանը եւ Հնդկաստանը 2025 թվականին մի քանի խոշոր պայմանագրեր են ստորագրել, որոնք վերաբերում են ավիացիայի ոլորտին: Ինչպես հաղորդում է «ՌԻԱ Նովոստի» գործակալությունը, այդ մասին լրագրողներին ասել է Ռուսաստանի ռազմատեխնիկական համագործակցության դաշնային ծառայության տնօրեն Դմիտրի Շուգաեւը:

«Հնդկաստանը մեր ռազմավարական գործընկերն է՝ մեծ ծավալով, մեծ պորտֆելով: Ստորագրվել են մի քանի խոշոր պայմանագրեր: Դրանք վերաբերում են ավիացիոն թեմատիկային, մենք առաջ կշարժվենք..... Դրանով իսկ ավելացել է նրանց (պայմանագրերի) պորտֆելը», - ասել է Շուգաեւը:

Նրա խոսքով՝ այն պայմանագրերը, որոնք պատրաստվել են 2024 թվականին, 2025 թվականին արդեն ստորագրվել են:

ԵԱՀԿ ՄԻՆՍԿԻ ԽՈՒՄԲԸ ԿՓԱԿՎԻ

ԵԱՀԿ նախարարների խորհուրդը որոշում կայացրեց՝փակել ԵԱՀԿ Մինսկի գործընթացը եւ դրան կից կառույցները:

Նշենք, որ կառույցը լուծարելու առաջարկով հանդես են եկել Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանն ու Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը:

«Անվավեր է ճանաչվել ԵԱՀԿ շրջանակներում հայ-ադրբեջանական հակամարտության վերաբերյալ նախկինում ընդունված բոլոր որոշումները»,- նշված է Ադրբեջանի ԱԳՆ-ի տարածած հաղորդագրության մեջ:

ԹԻՐԱԽԱՎՈՐՎԵԼ Է ՆԱՎԹԱՏԱՐ ՆԱՎ

Եմենի հութիները հայտարարել են, որ Կարմիր ծովի հյուսիսում թիրախավորել են իսրայելական նավթատար նավ, այս մասին հայտնում է հութիներին պատկանող Al Masirah հեռուստալիքը:

Զինված ուժերի խոսնակ Յահյա Սարին հայտարարության մեջ պարզաբանել է, որ Եմենի ռազմածովային ուժերը Կարմիր ծովի հյուսիսում բալիստիկ հրթիռով թիրախավորել են իսրայելական Scarlet Ray նավթատար նավը՝ հավելելով, որ գործողության արդյունքում հրթիռն ուղիղ հարված է հասցրել նավին:

Հաղորդագրությունների համաձայն՝ նավի անձնակազմի անդամները չեն տուժել:

ԿԱՐԵՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

ԻՆՉ Է ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵԼ ԲԴԽ-ԻՑ ՀԵՌԱՆԱԼԻՍ

2022 թվականի հոկտեմբերի 7-ին ԲԴԽ անդամների կողմից Կարեն Անդրեասյանը ընտրվեց Բարձրագույն դատական խորհրդի նախագահ, ապա այդ պաշտոնից հեռացավ՝ վարչապետի կողմից SMS ստանալով: Օրերս էլ հենց նույն Նիկոլ Փաշինյանի հրամանով նա նշանակվել է միջազգային իրավական հարցերով ներկայացուցիչ:

2024 թվականի դեկտեմբերին Կարեն Անդրեասյանը ներկայացրել է պաշտոնական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա անշարժ գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի հայտարարագիր:

Համաձայն այդ հայտարարագրի՝ Անդրեասյանը պաշտոնանկ լինելու պահին ունեցել է 5 անշարժ գույք՝2 բնակարան, 2 անհատական բնակելի տուն եւ 1 հողամաս:

Բնակարաններից մեկը Անդրեասյանը ձեռք է բերել 2023 թվականին Երեւանում՝ 61 մլն 699 հազար դրամ արժեքով:

Տրանսպորտային միջոցներ նախկին ՄԻՊ-ը եւ ԲԴԽ նախագահը չի հայտարարագրել:

Կարեն Անդրեասյանը հայտարարագրել է 2017 թվականին ձեռք բերված, 4 մլն դրամ արժեք ունեցող թանկարժեք զարդ, որը ներկայացվել է որպես նվիրատվություն:

Նրա բանկային հաշիվների մնացորդները, պաշտոնը դադարեցնելու պահին, կազմել են գրեթե 166 հազար եվրո, 431 ԱՄՆ դոլար եւ 173 հազար 985 դրամ:

Պաշտոնի ստանձնման կամ դադարեցման օրվա դրությամբ առկա կանխիկ դրամական միջոցները կազմել են 1,5 մլն դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանի եկամուտները՝16 մլն 938 հազար դրամ՝որպես աշխատանքի վարձատրություն ՀՀ ԲԴԽ Դատական դեպարտամենտից:

Հանգստի համար կատարած ճանապարհածախսը տվյալ պահին կազմել է 9 մլն 400 հազար դրամ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԻՐԱՆԸ ՀԵՐՔԵԼ Է

Բաքվում Իրանի դեսպանատունը հերքել է ադրբեջանական ՋԼՄ-ների կողմից ՀՀ-ում ԻԻՀ դեսպանի հասցեին հնչեցրած մեղադրանքները:

Դիվանագիտական գերատեսչության հայտարարության մեջ ասվում է. «Ադրբեջանական կայքի կողմից Հայաստանում Իրանի դեսպանի հասցեին հրապարակված մեղադրանքները՝ «Լեռնային Ղարաբաղի անջատողականներին աջակցելու առաքելության» կամ Հայաստանի կառավարությանը ռազմական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ, բացարձակապես անհիմն եւ կեղծ են»:

Հիշեցնելով Արցախյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացին աջակցելու՝Իրանի Իսլամական Հանրապետության սկզբունքային դիրքորոշումը՝դեսպանությունը հայտարարել է, որ հիշյալ լրատվական կայքի բովանդակությունը հեղինակի ենթադրյալ շահարկումներն են», - գրում է իրանական լրատվամիջոցը:

ՓԱՇԻՆՅԱՆՆ ՈՒ ԷՐԴՈՂԱՆԸ ՀԱՆԴԻՊԵԼ ԵՆ

Շանհայի համագործակցության կազմակերպության գագաթնաժողովի շրջանակում տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ Թուրքիայի Հանրապետության նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հանդիպումը: Այս մասին հայտնում են ՀՀ կառավարությունից:

«ՇՀԿ գագաթնաժողովի շրջանակում հանդիպում ունեցա Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հետ»,- ավելի վաղ գրել էր Նիկոլ Փաշինյանը:

Թուրքիայի նախագահը հայտարարել է, որ գոհ է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղ գործընթացի ընթացքից: Թուրքիայի նախագահի աշխատակազմը ներկայացրել է բանակցությունների մանրամասները:

«Թուրքիան աջակցում է տարածաշրջանում խաղաղությանը, կայունությանը եւ զարգացմանը եւ շարունակելու է իր ներդրումն ունենալ այդ գործընթացում»,- ասել է Էրդողանը:

Էրդողանը նաեւ նշել է, որ «ընթանում է Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ համագործակցության ընդլայնմանն ուղղված քայլերի գնահատականը»:

Ջրուցակիցները կարեւորել են տարածաշրջանում կայունության եւ խաղաղության հաստատմանը միտված քայլերը:

ԵՐԿՐԱՇԱՐԺ՝ ԱՖՂԱՆՍՏԱՆՈՒՄ

Աֆղանստանի արեւելյան երկու նահանգներում տեղի ունեցած 6 մագնիտուդով երկրաշարժից հետո հարյուրավոր մարդիկ են զոհվել եւ վիրավորվել:

Այս մասին հաղորդում է Reuters գործակալությունը:

Երկրի իշխանությունները վիրավորներին ուղղաթիռներով տեղափոխել են անվտանգ վայրեր, փրկարարները շարունակում են փլատակներում ողջ մնացածների որոնումները:

Աֆղանստանի առողջապահական իշխանությունները զոհերի հստակ թիվ առայժմ չեն հայտնել: Ըստ առողջապահության նախարարության խոսնակի՝ մի քանի հիվանդանոցների տվյալներով զոհերի ու վիրավորների թիվը հասել է 400-ի, սակայն այդ թիվը, ամենայն հավանականությամբ, կավելանա:

Կունարի նահանգում երեք գյուղ է ավերվել, բազմաթիվ այլ գյուղեր լուրջ վնասներ են կրել:

Ըստ Կունարի իշխանությունների՝ նահանգում շուրջ 250 մարդ է զոհվել, 500-ը՝ վիրավորվել:

Reuters-ը հիշեցնում է, որ Աֆղանստանում հաճախ են երկրաշարժեր տեղի ունենում: 2024 թվականին մի շարք երկրաշարժերի հետեւանքով երկրում ավելի քան 1000 մարդ է զոհվել:

ՀՀ–ՊԱԿԻՍՏԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը եւ Պակիստանի Իսլամական Հանրապետության փոխվարչապետ եւ արտաքին գործերի նախարար Մոհամմադ Իշաք Դարը ստորագրել են Հայաստանի եւ Պակիստանի միջեւ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին համատեղ կոմյունիկե:

Ստորագրման արարողությունը կայացել է Չինաստանի Թիենծին քաղաքում անցկացվող ՇՀԿ գագաթաժողովի շրջանակներում:

Կոմյունիկեի ստորագրմամբ Հայաստանը եւ Պակիստանը հաստատում են դիվանագիտական հարաբերություններ: Երկու երկրների կառավարությունները ձգտում են զարգացնել բարեկամական հարաբերություններ՝ ՄԱԿ կանոնադրությանը համապատասխան՝ներառյալ ինքնիշխանության ու տարածքային ամբողջականության փոխադարձ հարգման, ագրեսիայի բացառման, միմյանց ներքին գործերին չմիջամտելու, հավասարության, փոխշահավետության եւ խաղաղ գոյակցության սկզբունքները:

Հայաստանի եւ Պակիստանի կառավարությունները համաձայնել են փոխանակվել Ներկայացուցիչներով եւ միմյանց ցուցաբերել անհրաժեշտ աջակցությունը՝ «Դիվանագիտական հարաբերությունների մասին» 1961 թ. Վիեննայի կոնվենցիային եւ միջազգային սովորույթային պրակտիկային համապատասխան փոխադարձության հիման վրա դիվանագիտական հարաբերությունների կյանքի կոչման նպատակով:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ԱՎՏՈՎԹԱՐԻ ԴԵՊՔՈՎ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾ Է ՀԱՐՈՒՑՎԵԼ

ՀՀ նախկին զինդատախազ Գագիկ Ջհանգիրյանի թոռնիկների եւ փեսայի ավտովթարի դեպքով հարուցվեց քրեական գործ:

ՀՀ քննչական կոմիտեից պաշտոնապես հայտնեցին, որ դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ՝ Քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 1-ին մասով (ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթեւեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգությունն ապահովող կանոնները խախտելը): Նշանակվել են դատաավտոտեխնիկական, դատաբժշկական փորձաքննություններ: Կատարվում է նախաքննություն:

Օգոստոսի 31-ին հայտնել էինք, որ ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ Դիլիջանում վթարի են ենթարկվել ՀՀ նախկին զինդատախազ Գագիկ Ջհանգիրյանի փեսան ու թոռները:

Օգոստոսի 30-ին խոշոր ավտովթար է տեղի ունեցել Տավուշի մարզում: Ժամը 16:30-ի սահմաններում Երեւան-Սեւան-Իջեւան ավտոճանապարհին՝ Դիլիջանի թունելի հարեւանությամբ՝ դեպի Դիլիջան ընթացող հատվածում, ճակատ ճակատի բախվել են «Toyota Land Cruiser» եւ «Hyundai X35» մակնիշի ավտոմեքենաները:

«Toyota Land Cruiser»-ի մեջ եղել են վարորդ Կ. Սեդրակյանը, Լիլիթ Գագիկի Ջհանգիրյանը, Ա. Սեդրակյանը, Կ. Սեդրակյանը եւ Տ. Սեդրակյանը, որոնք մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց: ArmLur.am-ը տեղեկացավ, որ վերջիններս ՀՀ նախկին զինդատախազ Գագիկ Ջհանգիրյանի փեսան ու թոռներն են:

Երեկ Shamshyan.com-ը հայտնել էր, որ խոշոր ավտովթար է եղել Դիլիջանում. ճակատ ճակատի բախվել են «Toyota Land Cruiser»-ն ու «Hyundai X35»-ը: Վթարի հետեւանքով տասը վիրավորներից չորսը երեխաներ են: Օպերատիվ են գործել Դիլիջանի հիվանդանոցի բժիշկները, փրկարարներն ու պարեկները:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՄԵՂԱԴՐԱՆՔ

Իրավապահների գործընթացը դատական համակարգի շուրջ շարունակվում է: Մեզ հայտնի դարձավ, որ Սյուզաննա Արամի Մխիթարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, պաշտոնատար անձի նկատմամբ ունեցած իրական կամ ենթադրյալ ազդեցությունը շահադիտական շահագրգռվածությունից ելնելով օգտագործելու նպատակով, անձամբ Ալբերտ Բարոյանից եւ Լարիսա Պողոսյանից պահանջել եւ ստացել է 350.000 ՀՀ դրամ՝ վերջիններիս օգտին պաշտոնատար անձ հանդիսացող դատական իշխանության ներկայացուցչի կողմից իր իշխանական կամ ծառայողական լիազորությունները օգտագործելով ապօրինի գործողություն կատարելու համար:

Ալբերտ Արտավազդի Բարոյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա կնոջ՝ Լարիսա Պողոսյանի հետ նախնական համաձայնությամբ, խմբով, քրեական վարույթով դեռեւս չպարզված պաշտոնատար անձ հանդիսացող ՀՀ դատական իշխանության ներկայացուցչին Սյուզաննա Մխիթարյանի միջոցով փորձել է տալ 350.000 ՀՀ դրամ կաշառք՝ դատական իշխանության ներկայացուցչի կողմից իր ծառայողական կամ իշխանական լիազորությունները օգտագործելով իրենց օգտին ապօրինի գործողություն կատարելու համար:

Սակայն Ալբերտ Բարոյանի եւ Լարիսա Պողոսյանի դիտավորության մեջ ընդգրկված հանցագործությունը նրանց կամքից անկախ հանգամանքներով չի իրագործվել:

ArmLur.am-ը հիշեցնում է, որ Սյուզաննա Մխիթարյանը Արագածոտնի մարզի դատարանի դատավորներից մեկի օգնականն էր:

ԿԱԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Հակակոռուպցիոն կոմիտեն կալանավորել է Երեւանի քաղաքապետարանի անշարժ գույքի կառավարման վարչության նախկին պետ Արսեն Ամյանին:

Ավելի վաղ հայտնել էինք, որ նա մեղադրվում է այն բանում, որ դիտավորությամբ միջոցներ չի ձեռնարկել Մոսկովյան փողոցում գտնվող «Սանտաֆե» սրճարան-ռեստորանի շենքը Երեւանի համայնքի գույքային հաշվեկշռում հաշվառելու ուղղությամբ:

Ի դեպ, նշված սրճարան-ռեստորանը պատկանում է ՀՀ ֆինանսների նախկին նախարար Գագիկ Խաչատրյանի որդիներին:

ԽՈՒԶԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Վարչական դատարանի դատավորների աշխատասենյակներում օգոստոսի 29-ին իրականացված խուզարկությունների դեպքով կալանավորվել է երկու անձ, որոնցից մեկը փաստաբան Արմեն Օհանյանն է: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝նախաքննական մարմինը կալանավորել է միջնորդին եւ ստացողի օժանդակողին:

Դատավորների մասով քննությունը դեռեւս շարունակվում է: Ավելի վաղ հայտնել էինք, որ առանձնապես խոշոր չափի կաշառքի վերաբերյալ գործով իրավապահները խուզարկություններ են իրականացրել Վարչական դատարանի դատավորներ Արգիշտի Ղազարյանի, Միհեր Պետրոսյանի եւ Լուսինե Բոյաջյանի աշխատասենյակներում:

Իսկ ի՞նչ հետքի վրա են դուրս եկել իրավապահները: Մասնավորապես, մեզ հասած տեղեկություններով՝ Արգիշտի Ղազարյանը Վարչական դատարանի նախագահ եղած ժամանակահատվածում իր մոտ է կանչել դատարանի դատավորներ Միհեր Պետրոսյանին եւ Լուսինե Բոյաջյանին եւ խնդրել, որ իրենց վարույթում քննվող գործերից մեկով որոշ քայլեր իրականացնեն: Մեզ հասած տեղեկություններով՝ դատավորները չեն էլ պատկերացրել, որ այդ ժամանակահատվածում Արգիշտի Ղազարյանի աշխատասենյակը գտնվում է իրավապահների ձայնագրության ներքո:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՋԱՏՄԱՆ ԴԻՄՈՒՄ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ

ԱԱԾ-ում միանգամից երկու գեներալ պաշտոնից ազատման դիմում է ներկայացրել:

ArmLur.am-ին երեկ հայտնի դարձավ, որ ՀՀ Ազգային անվտանգության ծառայությունում լուրջ կադրային տեղաշարժեր են տեղի ունենում:

Մեր իրավապահ աղբյուրների փոխանցմամբ՝ ԱԱԾ երկու գեներալներից մեկին՝ Երեւանի վարչության պետին, առաջարկվել է ստանձնել Հակակոռուպցիոն վարչության պետի պաշտոնը, սակայն նա հրաժարվել է այդ առաջարկից եւ դուրս եկել ԱԱԾ-ից:

Նույն աղբյուրների փոխանցմամբ՝ ԱԱԾ Հակահետախուզության վարչության պետը հեռացվել է զբաղեցրած պաշտոնից: Ըստ մեզ հասած տեղեկությունների՝նրան այդ պաշտոնում կփոխարինի ԱԱԾ նախկին տնօրեն Արմեն Աբազյանի պաշտոնավարման ընթացքում ազատված նույն վարչության մեկ այլ բարձրաստիճան աշխատակից:

ArmLur.am-ը շարունակելու է հետեւել իրադարձությունների զարգացումներին:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԿԱՊԱՆՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ Է ՆԱԽԱՔՆՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Օգոստոսի 28-ին ՆԳՆ ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն էր զանգահարել Կապան քաղաքի մի բնակիչ եւ հայտնել, որ Հունան Ավետիսյան փողոցի շենքերից մեկի բնակարանում հայտնաբերել է 49-ամյա մորեղբոր դիակը՝ արյունլվա եւ գլուխը վնասված վիճակում: Սպանության հատկանիշներով քրեական վարույթ էր նախաձեռնվել:

Քրեական ոստիկանության գլխավոր վարչության եւ Սյունիքի մարզային վարչության ծառայողների համատեղ ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ օգոստոսի 27-ին՝ ժամը 20:30-ի սահմաններում, պարտքուպահանջի շուրջ վիճաբանություն է եղել 49-ամյա տղամարդու եւ 42-ամյա համաքաղաքացու միջեւ, որի ընթացքում էլ վերջինս մուրճով մի քանի անգամ հարվածել է 49-ամյա տանտիրոջ գլխին՝ պատճառելով մահ, ապա խառնել է տան իրերը՝ ստեղծելով գողության կեղծակերպում:

Կապան քաղաքի բնակիչ 42-ամյա տղամարդը օգոստոսի 29-ին հայտնաբերվել, ձերբակալվել եւ ներկայացվել է Սյունիքի մարզային քննչական վարչություն, որտեղ տվել է խոստովանական ցուցմունք:

Հանցագործության գործիք մուրճը հայտնաբերվել է:

Կատարվում է նախաքննություն:

1 ԿԳ–ԻՑ ԱՎԵԼԻ ՄԱՐԻԽՈՒԱՆԱ՝ ԲԵՌՆԱԽՑԻԿՈՒՄ

Երեւանի քրեական ոստիկանների կողմից թմրամոլ քաղաքացի է բռնվել: Քրեական ոստիկանության Երեւան քաղաքի վարչություն տեղափոխված տղամարդու խուզարկությամբ հայտնաբերվել էր մեթամֆետամին: Շատ ավելի բարդ ու երկարատեւ աշխատանք պահանջեց թմրանյութն իրացնողին հայտնաբերելու գործը:

Քրեական ոստիկանության Երեւան քաղաքի վարչության՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի բաժնի ծառայողների օրեր տեւած ծավալուն միջոցառումների արդյունքում ձերբակալվեցին մայրաքաղաքի Մարգարյան փողոցի բնակիչ 25-ամյա եւ Ֆուչիկի փողոցի բնակիչ 29-ամյա տղամարդիկ, որոնք վերջինիս վարած մեքենայով հանդերձ տեղափոխվեցին վարչություն:

Վարորդի խուզարկությամբ հայտնաբերվեցին թմրամիջոցի հետքերով ապակյա գլանակ ու կաթուցիչ, ինչպես նաեւ մեթամֆետամինի զանգվածներ:

Դատարանի որոշմամբ խուզարկվեց նաեւ Ֆուչիկի փողոցի 29-ամյա բնակչի ավտոմեքենան. բեռնախցիկում հայտնաբերվեց կպչուն ժապավենով փաթեթավորված, մեկ կիլոգրամից ավելի մարիխուանա:

Երիտասարդը կալանավորվել է:

Նախաքննությամբ հանգամանքները պարզվում են:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ օգոստոսի 29-ից սեպտեմբերի 1-ը ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 222 դեպք, որից 7-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԴՊՐՈՑՆԵՐԸ ՉԵՆ ՓԱԿՎԻ

Օգոստոսի 18-ին ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանին հարցում ենք արել. «Նախատեսվո՞ւմ է աշակերտների քիչ քանակ ունեցող Տավուշի մարզի հանրակրթական դպրոցները լուծարել, մասնավորապես՝ Աճարկուտի, Բարեկամավանի, Իծաքարի, Լուսահովտի դպրոցները 2025, 2026 թվականներին փակվելո՞ւ են, փակված դպրոցների աշակերտները ո՞ր դպրոցներ, ինչպե՞ս են հաճախելու»:

ԿԳՄՍՆ-ի տեղակալ Արաքսիա Սվաջյանի ստորագրությամբ պատասխանում նշված է. «2025-2026 ուստարում դպրոցների միավորում նախատեսված չէ»: Նույն հարցը ուղղել էի նաեւ Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին: Մարզպետարանից հայտնել են. «Այս պահի դրությամբ ոչ մի փակված դպրոց չունենք, ձեր նշած դպրոցները կփակվեն միայն ուսուցիչների եւ ծնողների համաձայնությամբ»:

ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐ

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանին հետեւյալ հարցումն ենք ուղարկել. «Տավուշի հանրակրթական 76 դպրոցներից 15-ը ղեկավարում են տնօրենների ժամանակավոր պաշտոնակատարները: Ինչո՞ւ են ձգձգվում դպրոցների տնօրենների թափուր տեղերի համար մրցույթները»: ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանի ստորագրությամբ պատասխանում նշված է. «Տնօրենի մրցույթների հայտարարման գործընթացները կազմակերպվում են համաձայն ՀՀ կառավարության 181-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձեւավորման, գործունեության, տնօրենի նշանակման եւ բողոքարկման, փորձաշրջանի սահմանման կարգի» պահանջներով: Հետեւաբար, այն դպրոցները, որտեղ տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար հայտարարված մրցույթները չեն կայացել ու թափուր տեղերը չեն համալրվել, առաջնորդվելով վերոգրյալ կարգով՝ հայտարարվում են նոր մրցույթներ»:

ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԱՆՏԵՂՅԱԿ ԵՆ

Տավուշի մարզպետ Հ. Ղալումյանին տեղեկատվական հարցում ենք արել. «Օգոստոսի 22-ի դրությամբ Տավուշի մարզի դպրոցներում քանի՞ կենսաթոշակառու տնօրեն, տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, փոխտնօրեն, ուսուցիչ է աշխատում: Օգոտոսի 22-ի դրությամբ Տավուշի մարզպետարանի ենթակայությամբ գործող բուժհիմնարկներում կենսաթոշակառու քանի՞ բժիշկ է աշխատում»: Մարզպետարանից պատասխանել են. «Հայտնում ենք, որ ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմը նման հաշվառում չի իրականացնում»: Մարզպետարանը անմիջական կարգով մարզի ընդամենը 2 ոլորտ է ղեկավարում՝ մարզի հանրակրթական դպրոցները (բացի ավագ դպրոցներից եւ վարժարաններից) եւ մարզի գյուղական բուժհիմնարկները, սակայն մարզպետարանը տվյալներ չունի, թե դրանցում քանի՞ կենսաթոշակառու դպրոցի տնօրեն, տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, փոխտնօրեն, ուսուցիչ, կենսաթոշակառու բժիշկ է աշխատում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԲԱՑ ՆԱՄԱԿ՝ «ԲՐՅՈՒՍՈՎԻ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՑ

ԿՐԿԻՆ ԱՊՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵ՞Ր, ԹԵ՞ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՄԿ

ArmLur.am-ը հերթական բաց նամակն է ստացել Բրյուսովի անվան պետական համալսարանի աշխատակազմից:

«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում կրքերը չեն հանդարտվում: Նոր ուսումնական տարվան ընդառաջ ԼՄ ֆակուլտետի դեկանի ժամանակավոր պաշտոնակատար, տխրահռչակ* Լեւոն Սարգսյանը եւ ուսումնագիտական աշխատանքների հարցերով պրոռեկտոր, ոչ պակաս տխրահռչակ* Դոնարա Ղազարյանը կրկին հայտնվել են ուշադրության կենտրոնում՝ իրենց ապօրինի գործողություններով:

Ակնհայտորեն շրջանցելով ամբիոնի վարիչի կանոնադրությամբ սահմանված պարտականությունները եւ անտեսելով նրա մասնագիտական դիրքորոշումը՝ կամայականորեն դասաժամեր են բաշխել այլ դասախոսների, ում մասնագիտական կարողությունները չեն համապատասխանում տվյալ ամբիոնի ուղղվածությանը: Սա ոչ միայն խաթարում է կրթական գործընթացի բնականոն կազմակերպումը, այլեւ վտանգում է ուսանողների կրթության որակը: Համալսարանում տեւական ժամանակ ձեւավորված անառողջ միջավայրը նոր խնդիրներ է ստեղծում ինչպես աշխատակիցների, այնպես էլ ուսանողների համար: Դասախոսական կազմի մասնագիտական կարծիքը եւ ամբիոնի վարիչի կանոնադրությամբ սահմանված պարտականությունները դուրս են մղվում, իսկ որոշումները կայացվում են փակ դռների հետեւում՝ անձնական շահերով պայմանավորված:

Բրյուսովի համալսարանը, որը տարիներ շարունակ համարվել է կրթական բարձր մշակույթի օջախ, այժմ վերածվել է ներքին շահարկումների ու կամայականությունների հարթակի: Իսկ ամենաանհանգստացնողն այն է, որ այս ամենը տեղի է ունենում ուսումնական տարվա նախաշեմին, երբ ուսանողները սպասում են գիտելիք ստանալու որակյալ ու արդար միջավայրի: Հասարակության եւ պետական կառույցների առջեւ դրված է լուրջ հարց. մինչեւ ե՞րբ պիտի համալսարանի ղեկավարները անպատիժ շարունակեն իրենց ապօրինությունները»:

Նշենք, որ համալսարանի այս խայտառակ իրավիճակի վերաբերյալ ArmLur.am-ը բազմիցս դիմել է ռեկտորին՝ պարզաբանման համար, սակայն վերջինս կտրականապես հրաժարվում է զրուցել այս խնդիրների առնչությամբ:

Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՆԱՄԻԿԱ

ԴԱՏԱՎՈՐԸ ՆԱԵՎ ՏԱՆ ՎԱՐՁԻ ԳՈՒՄԱՐ Է ՍՏԱՆՈՒՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ

ArmLur.am-ը օրերս հրապարակել էր Սամվել Կարապետյանի կալանքի որոշումը կայացրած դատավոր Ժենյա Մելիքսեթյանի ունեցվածքը, որտեղ մանրամասն ներկայացված էր դատավորի հայտարարագիրը: Բանն այն է, որ հաշվետու տարվա եկամուտներում հետաքրքիր մի կետ կա:

«Դատավորի հաշվետու տարվա եկամուտները կազմել են 84 մլն 426 հազար դրամ, որից 12 մլն 824 հազարը աշխատանքի վարձատրություն է ՀՀ ԲԴԽ Դատական դեպարտամենտից, 474 հազար դրամը կենսաթոշակ է ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության՝ Գյումրու սոցիալական ապահովության տարածքային բաժնից: Եկամուտներից 24 մլն 885 հազար դրամը Մելիքսեթյանը հայտարարագրել է որպես գույքի օտարումից ստացված գումար, սակայն անշարժ գույքի օտարման բաժնում վաճառքից ստացված գումարը կազմել էր ոչ թե 24 մլն, այլ 28,7 մլն դրամ: Արդյոք սա վրիպա՞ք է, թե՞ դիտավորություն. կպարզի Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:

ArmLur.am-ը պարզեց, որ Դատական դեպարտամենտը վարձակալության դիմաց Ժենյա Մելիքսեթյանին վճարել է 680 հազար 645 դրամ, այսինքն՝ դեպարտամենտը վարձակալել է դատավորին պատկանող տարածք»:

ArmLur.am-ը դիմել էր Դատական դեպարտամենտ, որտեղից մեզ փոխանցեցին, որ նշված 680 հազար 645 դրամը Դատական դեպարտամենտը դատավորին հատկացրել է համաձայն «Դատավորի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի, այն է՝ «Իր մշտական բնակության վայրից դուրս աշխատանքի նշանակվելիս դատավորին, կառավարության սահմանած չափերով եւ կարգով, վճարվում է իր եւ իր ընտանիքի անդամների տեղափոխման հետ կապված ծախսերի, ինչպես նաեւ բնակարանային վարձի փոխհատուցում: Իր մշտական բնակության վայրից դուրս գործուղվելիս դատավորին, կառավարության սահմանած չափերով եւ կարգով, վճարվում են գործուղման ծախսեր»:

Ստացվում է, որ տարեկան 84 մլն դրամ եկամուտ ունեցած դատավորը, որի ամսական աշխատավարձը 1 մլն դրամ է, ամսական մոտ 57 հազար դրամ էլ բնակարանի վարձակալության գումար է ստացել պետությունից:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՇՈՒՐՋ 1245 ՈՒԿՐԱԻՆԱՑԻ ՋԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿՈՐՈՒՍՏ՝ ՎԵՐՋԻՆ ՄԵԿ ՕՐՈՒՄ

Ռուսաստանի պաշտպանության նախարարությունը հայտարարել է, որ վերջին օրվա ընթացքում «հատուկ ռազմական գործողության» գոտում Ուկրաինայի զինված ուժերը կրել են ընդհանուր մոտ 1 245 զինծառայողի կորուստ: Ըստ նախարարության՝ կորուստները բաշխվում են հետեւյալ ուղղություններով՝ «Հյուսիս»՝ ավելի քան 150, «Արեւմուտք»՝ ավելի քան 230, «Հարավ»՝ ավելի քան 170, «Հարավ»՝ ավելի քան 415, «Արեւելք»՝ ավելի քան 220 եւ «Դնեպր»՝ ավելի քան 60 զինծառայող: ՌԴ ՊՆ-ի հաղորդագրության համաձայն՝ «Հյուսիս» զորախմբի ստորաբաժանումները հարվածել են երկու ուկրաինական մեխանիզացված բրիգադների, օդադեսանտային բրիգադի, հարձակողական գնդի, տարածքային պաշտպանության բրիգադի եւ հատուկ գործողությունների գնդի ուժերին Սումիի մարզի Պավլովկա, Վելիկայա Բերյոզկա, Ալեքսեեւկա, Յաստրեբինոյե, Յունակովկա եւ Պրոլետարսկոյե բնակավայրերի մոտ, ինչպես նաեւ մեխանիզացված եւ մոտոհրաձգային բրիգադների ուժերին Խարկովի մարզի Զելյոնոյե եւ Վոլչանսկ ուղղություններով: «Արեւմուտք» զորախումբը, բարելավելով մարտավարական դիրքերը, հարվածել է երկու մեխանիզացված եւ մեկ հարձակողական բրիգադների ուժերին՝ Կուպյանսկի, Պետր ուղ, Պետրոպավլովկա, Բորովսկայա Անդրեեւկա եւ Նովոսերգեեւկա (Խարկովի մարզ) շրջաններում, ինչպես նաեւ Կիրովսկում (ԴԺՀ): «Հարավ» զորախումբը, անցնելով ավելի շահեկան դիրքերի, հարվածներ է հասցրել չորս մեխանիզացված բրիգադների, օդադեսանտային բրիգադի եւ Ազգային գվարդիայի բրիգադի ուժերին ԴԺՀ-ի Պազենո, Սեւերսկ, Կոնստանտինովկա, Ֆյոդորովկա, Մարկովո, Մինկովկա, Վասյուկովկա, Իվանոպոլյե եւ Պերեզդնոյե բնակավայրերի մոտ: «Կենտրոն» զորախումբը, ըստ հաղորդագրության, բարելավել է առաջնագծի դիրքերը՝ հարվածելով երեք մեխանիզացված, օդադեսանտային, ծովային հետեւակի, երկու տարածքային պաշտպանության եւ Ազգային գվարդիայի բրիգադների ուժերին Դիմիտրով, Բելիցկոյե, Ռոդինսկոյե, Կրասնոլ Լիման, Ուդաչնոյե, Կրասնոարմեյսկ եւ Լիսովկա (ԴԺՀ) շրջաններում:

ՍՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 47 պատահար, 76 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ՝ 1815 ՕՏԱՐԵՐԿՐԱՑՈՒ

Հայաստանում 2025 թվականի հունվար-հունիսին ժամանակավոր կացության կարգավիճակ է ստացել 1815 օտարերկրացի, մշտական կացության կարգավիճակ՝ 1775 օտարերկրացի, այս մասին են փաստում Վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալները:

Ժամանակավոր կացության կարգավիճակ ստացածներից 638-ը Հայաստանում կացության կարգավիճակ է ստացել՝ ընտանիքի հետ միավորվելու հիմքով, 769-ը՝ ուսման հիմքով, 398-ը՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հիմքով, 10-ը՝ ազգությամբ հայ լինելու հիմքով:

Հայաստանում առաջին կիսամյակում ամենաշատը ժամանակավոր կացության կարգավիճակ են ստացել ՌԴ քաղաքացիներ՝ 474 մարդ: 6 ամսում ժամանակավոր կացության կարգավիճակ է ստացել Հնդկաստանի 466 քաղաքացի, Իրանի 293 քաղաքացի:

Ինչ վերաբերում է մշտական կացության կարգավիճակ ստացածներին, ապա 1775-ից 209-ը կարգավիճակը ստացել է առնվազն երեք տարի բնակվելու հիմքով (մինչեւ մշտական կացության կարգավիճակ ստանալու համար դիմելը Հայաստանի Հանրապետությունում առնվազն երեք տարի բնակվելու հանգամանքը, Հայաստանում բնակվող ՀՀ քաղաքացի հանդիսացող կամ հատուկ կացության կարգավիճակ ունեցող ամուսնու կամ մերձավոր ազգականների առկայությունը եւ Հայաստանում բնակարանով ու գոյության միջոցներով ապահովվածությունը), 251-ը՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հիմքով, 1315-ը՝ ազգությամբ հայ լինելու հիմքով:

Հայաստանում ամենաշատը մշտական կացության կարգավիճակ են ստացել ՌԴ քաղաքացիները՝ 970 մարդ: 6 ամսվա ընթացքում երկրում մշտական կացության կարգավիճակ է ստացել Վրաստանի 143 քաղաքացի, Սիրիայի 117 քաղաքացի, Ուկրաինայի 113 քաղաքացի, Լիբանանի 48 քաղաքացի:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Ալեն Չեխերդեմյանս, կորցրել եմ 2020 թվականի հունիսի 19-ի որոշմամբ ինձ շնորհված, ՀՀ Երեւանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի՝ բժիշկ-ստոմատոլոգ որակավորման, ստոմատոլոգիա մասնագիտությամբ դիպլոմս:

Դիպլոմի սերիան՝ AD N 094749:

Դիպլոմս կորցրել եմ մոտ երկու տարի առաջ, անհայտ պայմաններում:

«ԱԿԲԱ» ՖԵԴԵՐԱՑԻԱ

ՏՆԻՑ՝ ՀՅՈՒՐԱՏՈՒՆ. ԻՆՉՊԵՍ ԳԱՂԱՓԱՐԸ ԴԱՐՁԱՎ ԲԻԶՆԵՍ

Մասնագիտությամբ մանկավարժ Աստղիկ Ղազարյանը չորս տարի առաջ իր հարազատ Մարմարիկ գյուղում հիմնել է «Մանանա» հյուրատունը, որտեղ այցելում են գյուղական ղարգությունն ու ջերմությունը գնահատողները: Այստեղ հյուրերը ջերմ հանգստից բացի կարող են ծանոթանալ նաեւ հին հայկական արհեստներին՝ գորգագործություն, թաղիքագործություն ու տիկնիկագործություն, ինչպես նաեւ մասնակցել բայլարտավերի ու համտեսել տնական բազմատեսակ ուտեստներ:

«Մանանա» հյուրատունն «Ակբա» Ֆեդերացիայի եւ Գերմանիայի բնության պահպանության միության՝ NABU-ի «Գյուղական տուրիզմի զարգացման» ծրագրի շահառուներից է: Աստղիկը ծրագրի շնորհիվ լուծել է հյուրատան պտղատու այգիների ոռոգման խնդիրները:

«Ամռան երեք ամիսներին մեր տանը շատ հյուրեր էինք ընդունում, ովքեր ասում էին, որ գերազանց պայմաններ են ու սիրով երկար կմնան մեզ մոտ: Այդ ժամանակ գաղափար առաջացավ մեր տունը հյուրատուն դարձնել: Անընդհատ հետեւում եմ նորություններին ու այդպես տեղեկացա, որ «Ակբա» Ֆեդերացիան ու NABU-ն հյուրատների համար հայտարարել են դրամաշնորհային մրցույթ, որը կոչվում էր «Կանաչ հյուրատուն»: Լրացրի հայտը, եկան ուսումնասիրության ու պարզվեց, որ Հայաստանում 5 հաղթողներից մեկը հենց մեր հյուրատունն է: Մենք մտածում էինք, որ անձրեւաջուրը կարող է դառնալ ոռոգման աղբյուր, որով կոռոգենք այգին: Ծրագրի շնորհիվ հիմա ունենք 2 տոննա տարողությամբ բաք, որտեղ հավաքվում է մեր տանիքի անձրեւաջուրն ու ավտոմատ ջրում այգին»,- նշել է «Մանանա» հյուրատան հիմնադիր Աստղիկ Ղազարյանը:

Աստղիկը հյուրատունը զարգացնելու շատ նախագծեր ունի, որոնցով ապագայում իր գյուղը նաեւ ավելի ճանաչելի կդարձնի:

«Մանանա» հյուրատան հասցեն է համայնք Ծաղկաձոր, գյուղ Մարմարիկ:

Հեռ.՝ 093 241 340:

«Ակբա» Ֆեդերացիան «Ակբա» բանկի միակ նշանակալից մասնակիցն է, բանկի բաժնետոմսերում ունի ավելի քան 75 տոկոս մասնաբաժին: «Ակբա» բանկում ունեցած մասնակցության շնորհիվ «Ակբա» Ֆեդերացիան նպաստում է Հայաստանի ողջ տարածքում գյուղատնտեսության, գյուղական շրջաններում փոքր եւ միջին բիզնեսի զարգացմանը, համայնքների զարգացմանը, համայնքներում բիզնես միջավայրի աշխուժացմանն ու զարգացմանը, նշված ոլորտներում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող յուրաքանչյուր անձի բարեկեցության աճին:

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԱԾՎՈՒՄ Է ԴԱԲԱՂԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ

Արդեն տեւական ժամանակ է, ինչ Շիրակի մարզի տաբեր գյուղերից մեզ ահազանգում են, որ կենդանիների մոտ դաբաղի հիվանդություն է սկսվել եւ շարունակվում է տարածվել:

«Հիվանդությունը կա ամբողջ տարածաշրջանում: Կողքի գյուղերից տարածվելով՝ հասել է մինչեւ Հոռոմ գյուղ: Հստակ չեմ կարող ասել՝ քանի կենդանի է հիվանդությունից սատկել, բայց նկատելի է: Իմ խոզի 20 գոճիները սատկել են, բոլորն էլ՝ հիվանդությունից»,- ասում է մեզ ահազանգած քաղաքացին: Մեր զրուցակիցը հույս չունի, որ կփոխհատուցեն: Ասում է՝ մնաս միշտ էլ կրել ենք, ի՞նչ փոխհատուցում, ո՞վ պիտի փոխհատուցի:

Մենք զրուցել ենք նաեւ Հոռոմի համայնքի ղեկավար Գուրգեն Սարգսյանի հետ: Մեզ հետ զրույցում համայնքի ղեկավարը նշեց, որ համաճարակը արդեն նահանջում է: Նա ասաց, որ առանց հետազոտության էլ պարզ է՝ կենդանիների մոտ տարածվող հիվանդությունը դաբաղի ախտանիշներ են:

«Կողքի գյուղերից է սկսվել տարածումը: Մեր գյուղում այդքան էլ չի հասցրել տարածվել, հիմա էլ արդեն հետ է քաշվում: Կենդանիների մոտ առկա հիվանդությունները դաբաղի ախտանիշներ են: Հոռոմ գյուղում խոշոր եղջերավոր կենդանիներ հիվանդությունից չեն սատկել: Նման դեպքեր արձանագրվել են միայն խոճկորների պարագայում, որոնք նոր ծնված են եղել: Փոխհատուցում ստանալու համար գյուղացիները չեն դիմել եւ փոխհատուցումն է գործելու է միայն խոշոր եղջերավորների պարագայում», - մեզ հետ զրույցում ասաց Հոռոմ համայնքի ղեկավար Գուրգեն Սարգսյանը:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐԹԱԿ

Սեպտեմբերի 1-ից ժամանակավոր անաշխատունակության եւ մայրության նպաստների հաշվարկման, նշանակման ու վճարման ամբողջ գործընթացը կիրականացվի էլեկտրոնային եղանակով:

«Պետական եկամուտների կոմիտեն, Առողջապահության նախարարության ու աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության հետ համատեղ, ներդրել է նպաստների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման միասնական էլեկտրոնային հարթակ»,- նշված է ՊԵԿ-ի տարածած հաղորդագրության մեջ:

Նոր փոփոխությամբ՝ սեպտեմբերի 1-ին եւ դրանից հետո առաջացած ժամանակավոր անաշխատունակության թերթիկի բացման եւ փակման վերաբերյալ տվյալները բժշկական հաստատությունը Միասնական սոցիալական ծառայությանը կներկայացնի էլեկտրոնային եղանակով: Այնուհետեւ տվյալ տեղեկատվությունը կփոխանցվի Պետական եկամուտների կոմիտե՝ արտացոլվելով Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի նորաստեղծ «Նպաստներ» էջում: Աշխատակցի ժամանակավոր անաշխատունակության վերաբերյալ տվյալները գործատուին հասանելի կլինեն այդ էջի միջոցով:

Իսկ անաշխատունակության թերթիկը, փակվելուց հետո, Կոմիտեի կողմից փոխանցված համապատասխան տեղեկատվության հիման վրա, Միասնական սոցիալական ծառայությունն առանձին-առանձին կհաշվարկի՝ թե գործատուի կողմից վճարվելիք գումարի չափը, թե պետության: Այդ տեղեկատվությունը եւս կարտացոլվի «Նպաստներ» էջում: Գործատուն, հիմք ընդունելով այդ հաշվարկը, պարտավոր է իր կողմից վճարման ենթակա նպաստը վճարել առաջիկա աշխատավարձի վճարման համար օրենսդրությամբ սահմանված ժամկետում եւ այն արտացոլել եկամտային հարկի ամսական հաշվարկում:

Նոր համակարգի շնորհիվ համապատասխան պետական մարմինների միջեւ տվյալների փոխանցումը կկատարվի ինքնաշխատ: Արդյունքում՝ քաղաքացին իր գործատուին ժամանակավոր անաշխատունակության թերթիկն առձեռն ներկայացնելու անհրաժեշտություն չի ունենա, իսկ գործատուն ստիպված չի լինի այցելել համապատասխան գերատեսչություններ:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Ի փոփոխություն «Ժողովուրդ» օրաթերթի 09.07.2025թ. թիվ 92 (3123) համարի 6-րդ էջում տպագրված «Հրապարակային ծանուցման», տեղեկացնում ենք, որ «Ֆլորես» Աճուրդի Տուն» ՍՊԸ-ի կողմից կազմակերպված «Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ սեփականության իրավունքով պատկանող ստորեւ նշված լոտերի աճուրդային փուլերը շարունակվելու են 08.09.2025թ.-ից: Աճուրդի ավարտը՝ 30.12.2025թ.:

- Սյունիքի մարզ, համայնք Կապան, Կապան ք., Դավիթ Բեկ թաղամաս /Կարեն Դեմիրճյան հրապարակ/, 2/8 հասցեում գտնվող 262,85 քմ հյուրանոց: Մեկնարկային գինը՝ 130000000 ՀՀ դրամ:
- Սյունիքի մարզ, համայնք Կապան, Կապան ք., Կարեն Դեմիրճյան հրապարակ, 2/9 հասցեում գտնվող 291,03 քմ հյուրանոց: Մեկնարկային գինը՝ 130000000 ՀՀ դրամ:

Ծանուցման մնացած դրույթները մնում են անփոփոխ:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԱՐՑԱԽ՝ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՅՐԵՆԻՔ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՐՎԵՍՏԻ ՀԵՏՔԸ

Սեպտեմբերի 2-ը հայոց պատմության մեջ առանձնահատուկ օր է. 1980-ական թվականների վերջին արցախյան ազատագրական պայքարի արդի փուլի վերջնարդյունքը եղավ Արցախի անկախությունը, որը ընդունվեց 1991 թվականի այս օրը՝ սեպտեմբերի 2-ին: Թեեւ այսօրվա իրողությունները ցավալիորեն փոխել են Արցախի քաղաքական ու վարչական կարգավիճակը, սակայն Արցախի մշակութային ժառանգությունը շարունակում է մնալ հայկական ինքնության անբակտելի մասը:

Այս օրը ոչ միայն հիշատակի առիթ է, այլեւ հնարավորություն՝ անդրադառնալու արցախյան հարուստ մշակութային ժառանգությանը: «Ժողովուրդ» օրաթերթը օրվա խորհրդով անդրադառնում է նախաքրիստոնեական ու քրիստոնեական շրջանում ստեղծված մշակութային ժառանգությանը Լեռնային Ղարաբաղում:

Արցախում ստեղծված արվեստն ու ճարտարապետությունը անցել են զարգացման նույն փուլերով, ինչ Հայաստանում՝ նախաքրիստոնեական ժամանակաշրջանից մինչեւ քրիստոնեության ընդունումը չորրորդ դարում, եւ միջնադարյան ծաղկուն շրջանը:

Արցախի ամենահին հուշարձանները վերաբերում են նախաքրիստոնեական դարերին, երբ բազմաստվածությունը գերակշռող կրոն էր համարվում: Այդ ժամանակաշրջանում արվեստի առավել հայտնի ճյուղը խոշոր մարդածին քարե կուռքերի պատրաստումն էր, որոնք հայտնաբերվել են Ջրաբերդում եւ Խաչենում, Երկաթյա դարաշրջանի հուշարձանների շարքում:

Արցախի հյուսիսարեւելյան եւ արեւելյան տարածքներում գոյություն ունեն սահմանաքարեր, որոնք կոչվել են «սահմանակարներ»՝ նշանակելով տարածքային սահմանի նշաններ: Սահմանաքարերի ավանդույթը սկիզբ է առել Արտաշեսյան թագավորական դինաստիայի ժամանակաշրջանում (190-39 թթ.), երբ դրանք ծառայել են թագավորության սահմանները ներկայացնելուն եւ արձանագրություններ կատարելուն: Միջնադարում Արցախում շարունակվել է այս ավանդույթը, իսկ Մարտակերտի շրջանում Մատաղիսի մոտ գտնվող ամենամեծ միջնադարյան սահմանաքարի արձանագրությունն այսօր հիշեցնում է. «Այստեղ ավարտվում է Սյունիքի մարզը»:

Միջնադարյան շրջանում Արցախում գերակշռող էր եկեղեցական ճարտարապետությունը՝ եկեղեցիներ, տաճարներ, մատուռներ եւ վանքեր: Այս ժամանակաշրջանում արվեստի մյուս ճյուղերը նույնպես ծաղկում էին. ստեղծվում էին ձեռագրեր, խաչքարեր եւ որմնանկարներ, որոնք նվիրված էին Արցախի տարածաշրջանին եւ Հայ Առաքելական եկեղեցուն:

Արցախն ու նրա հարակից նահանգները՝ Ուտիքը եւ Փայտակարանը, միջնադարում դարձել էին կրթական կենտրոններ, որտեղ գործունեություն էին ծավալում առաջատար կրոնական առաջնորդներ: Նրանցից առավել հայտնի են Գրիգոր Լուսավորիչը (257-331), Հայաստանի առաջին կաթողիկոսը, եւ Սուրբ Մեսրոպ Մաշտոցը (361-440), հայոց այբուբենի ստեղծողը: Նրանց գործունեությունը թողել է անմահ հետք՝ բազմաթիվ քրիստոնեական հուշարձաններով, որոնք համարվում են հայ ժողովրդի հավատքի ու մշակույթի հնագույն վկայություններ:

Ամենահայտնի կենտրոններից մեկը՝ Ամարասի վանքը, հիմնադրվել է IV դարում Սբ Գրիգոր Լուսավորչի կողմից: Վանքի ամենահին հատվածը նվիրված է Սուրբ Գրիգորիսին, իսկ նրա գերեզմանատունը՝ ծածկված երկու կողային գավիթներով, վկայում է հայ միջնադարյան ճարտարապետության բարձր մակարդակի մասին: 410 թվականին Սուրբ Մեսրոպ Մաշտոցը Ամարասում հիմնեց դպրոց, որտեղ օգտագործվում էին նորաստեղծ հայոց գրերը:

Արցախում եւ հարակից շրջաններում գործող Թարգմանչաց վանքը եւս կապված է Մաշտոցի եւ Սահակ Պարթեւի գործունեության հետ: Վանքն անվանվել է «Սուրբ թարգմանիչներ», քանի որ այստեղ հայերեն են թարգմանվել Աստվածաշունչն ու կրոնական այլ գրքեր, ինչը ամրապնդեց հայ մշակութային ինքնությունը եւ կրթությունը:

Միջնադարյան Արցախի ամենահայտնի կոթողներից մեկն է Գանձասարի վանական համալիրը, որը կառուցվել է 1261 թվականին եւ առանձնանում է իր չափերով ու բարձրակարգ վարպետությամբ: Գմբեթը լուսավորվում է կենտրոնական պատուհանով, զարդարված արվեստի այնպիսի էլեմենտներով, ինչպիսիք հանդիպում են Հաղպատում, Մշկավանքում ու Գեղարդում: Գանձասարի վանքը խաչենի հոգեւոր կենտրոնն էր, այստեղ էր տեղավորված Աղվանքի Կաթողիկոսությունը՝ Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու տարածքային կարեւոր ստորաբաժանումներից մեկը:

Արցախը շարունակում է լինել հայ մշակույթի ու ինքնության անբաժան մասը. մենք մշտապես պետք է հիշենք ու հավատանք, որ հողը չի մոռանում իր իսկական տիրոջը, եւ հողի ու տիրոջ երանելի հանդիպումը մի օր անպայման կյանքի է կոչվելու:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ԱՐՎԵՍՏ ԵՎ ԺԱՄԱՆՑ

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐ ԿԱՆՑԿԱՑՎԵՆ

ՀՀ ԿԳՄՍՆ նախարարությունում տեղի է ունեցել միջգերատեսչական հնագիտական հանձնաժողովի նիստ, որի ընթացքում քննարկվել են Հայաստանի Հանրապետությունում 2024 թվականին իրականացված 10 հուշարձանների հնագիտական պեղումների հաշվետվությունները:

ԿԳՄՍ նախարարությունից հայտնում են, որ նիստում, մասնավորապես, ներկայացվել են Վայոց ձորի մարզի Գնիշիկաձորի հնագիտական համալիրի միջնադարյան շինության, Արագածոտնի մարզի Աշտարակ խոշորացված համայնքի Շամիրամ բնակատեղիի Շամիրամ-2 հնագիտական համալիրի, Սյունիքի մարզի Արծվանիկ համայնքի Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի պոչամբարին հարող տարածքի, Արագածոտնի մարզի Թալինի Կաթողիկե եկեղեցուց (VII դ.) հարավ ընկած հատվածի, Արմավիրի մարզի Տարոնիկ համայնքի Մեծամոր հնավայրի դամբարանադաշտի, Երեւան քաղաքի Կարմիր բլուր հնավայրի եւ այլ հնագիտական պեղումների հաշվետվությունները:

Հանձնաժողովը քննարկել է նաեւ 2025 թվականին մի շարք հնագիտական հուշարձանների տարածքներում, այդ թվում՝ Արարատի մարզի Հայանիստ գյուղի «Ոսկեբլուր» վաղ բրոնզեդարյան բլուր-բնակատեղիում, Արարատի մարզի Տիգրանաշեն գյուղի «Տիգրանաշեն» հնագիտական համալիրում, Արմավիրի մարզի Տարոնիկ համայնքի «Մեծամոր» հնավայրի դամբարանադաշտում, Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Բերդկունք գյուղի «Բերդկունք» ամրոցում եւ այլ վայրերում պեղումներ իրականացնելու թույլտվությունների հարցը:

«ՄԹՆՇԱՂԸ» ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Է ՄԵԾ ԷԿՐԱՆՆԵՐ

«Մթնշաղ» սագան պաշտոնապես վերադառնում է մեծ էկրան, եւ երկրպագուները արդեն զանգվածաբար կորցնում են իրենց հանգիստը: Վամպիրների եւ մարդագայլերի մասին ֆիլմերը կվերադառնան կինոթատրոններ այս հոկտեմբերին՝ առաջին անգամ վերջին մասի՝ «Լուսաբաց. Մաս 2»-ի 2012 թվականին թողարկվելուց հետո:

ՄԱՐՔԱԿԱՆ

ՀԱՅՏՆԻ ԵՆ «ՆՈԱ»-Ի ՄՐՑԱԿԻՑՆԵՐԸ

Մոնակոյում կայացավ Կոնֆերենցիաների լիգայի հիմնական փուլի վիճակահանությունը, որտեղ հայտնի դարձան Հայաստանի չեմպիոնի՝ Երեւանի «Նոա»-ի մրցակիցները:

«Նոա»-ն, որը երկրորդ տարին անընդմեջ դուրս եկավ Կոնֆերենցիաների լիգայի հիմնական փուլ, հանդիպումներ կանցկացնի «Լեգիա»-ի (Լեհաստան), «Դինամո Կիեւ»-ի (Ուկրաինա), «Ռիեկա»-ի (Խորվաթիա). «Աբերդին»-ի (Շոտլանդիա), «Սիգմա»-ի (Չեխիա), «Ունիվերսիտատեա Կրայովա»-ի (Ռումինիա) հետ:

Կոնֆերենցիաների լիգայի հիմնական փուլի առաջին հանդիպումները կկայանան հոկտեմբերի 2-ին:

ՀԱՅ ԹԵՆԻՍԻՍՏՈՒՀԻՆ ՎԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՍ ԿԱՆՑԿԱՑՆԻ

Պրոֆեսիոնալ թենիսիստ Էլինա Ավանեսյանը սեպտեմբերի 5-10-ը կժամանի Հայաստան:

«Կերոն» զարգացման հիմնադրամի նախաձեռնությամբ Էլինա Ավանեսյանը սեպտեմբերի 6-ին՝ ժամը 11:00-ին, Ծաղկաձորի գլխավոր մարզահամալիրում վարպետաց դաս կանցկացնի երեխաների համար, որի ընթացքում կկիսվի խորհուրդներով եւ մարզման հմտություններով:

Միջոցառումը բաց է բոլորի համար եւ հասանելի՝ պարտադիր գրանցմամբ:

Հիշեցնենք, որ Էլինա Ավանեսյանը 2024 թվականի օգոստոսից հանդես է գալիս Հայաստանի դրոշի ներքո:

ԲԵՐԵԶՈՎՍԿԻՆ ՄԱՐԶՉԱԿԱՆ ՇՏԱԲՈՒՄ ՉԻ ԸՆԴԳՐԿՎԵԼ

Լեգենդար դարպասապահ Ռոման Բերեզովսկին չի ընդգրկվել Հայաստանի ազգային հավաքականի նոր գլխավոր մարզիչ Եղիշե Մելիքյանի մարզչական շտաբում: Այս մասին հայտնի դարձավ օրերս, երբ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան պաշտոնապես հրապարակեց մարզչական շտաբում ներառված մասնագետների անունները:

Շտաբում, բացի Եղիշե Մելիքյանից, ընդգրկվել են նրա օգնականներ Աղվան Այվազյանն ու Ռոման Մոնարյովը, դարպասապահների մարզիչ Ստեփան Դեմիրճյանը, ինչպես նաեւ ֆիզպատրաստության մարզիչ Խավիեր Մինյանոն:

«Առանձնապես բան չկա մեկնաբանելու: Այո՛, հավաքականի նոր մարզչական շտաբում չեմ ընդգրկվի: Այս մասով մեկնաբանություններ չկան: Իսկ մաղթանքս է, որ թիմը առաջիկա եւ հաջորդ հանդիպումներում լավ խաղ ցուցադրի եւ դրական արդյունքի հասնի», - «Sputnik Արմենիա» լրատվականի հետ զրույցում ասել է Հայաստանի ազգային հավաքականի նախկին դարպասապահը:

● *Սեպտեմբերի 19-ին՝ 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում տեղի կունենա «Տիկնայք եւ պարոնայք» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000, 4.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ով իրավունք ունի ստանալու սոցիալական նպաստ, եւ ինչպես է հաշվարկվում ընտանեկան նպաստի չափը:

Կարինե Մանուչարյան (44 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ սոցիալական նպաստ ստանալու իրավունք ունի ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված, մինչեւ 18 տարեկան անդամ չունեցող այն ընտանիքը, որի անապահովության միավորը բարձր է ՀՀ կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված սոցիալական նպաստի իրավունք տվող սահմանային միավորից: Միաժամանակ հայտնում ենք, որ նպաստի չափը հաշվարկվում է՝ ընտանեկան նպաստի բազային մասին ավելացնելով ընտանիքի կազմում գտնվող եւ ընտանիքի բնակության վայրում փաստացի բնակվող, 18 տարին չլրացած յուրաքանչյուր անդամի համար տրվող հավելումը:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն:

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նկատենք, որ ընտանեկան նպաստ ստանալու իրավունք ունի ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված, մինչեւ 18 տարեկան անդամ ունեցող այն ընտանիքը, որի անապահովության միավորը բարձր է ՀՀ կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված ընտանեկան նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային միավորից:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ, թե ինչ կարգով է իրականացվում ամուսնալուծությունը եւ դրա պետական գրանցումը:

Մարիետա Մովսիսյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ ամուսնալուծության պետական գրանցման հիմքերն են՝

1. ամուսինների համատեղ դիմումը՝ փոխադարձ համաձայնությամբ ամուսնալուծության պետական գրանցում կատարելու համար,
2. ամուսիններից մեկի դիմումը, եթե մյուսին դատարանը ճանաչել է անհայտ բացակայող կամ անգործունակ, կամ մյուսը դատարանի դատավճռով դատապարտվել է ազատազրկման,
3. ամուսիններից մեկի դիմումը եւ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը՝ դատական կարգով ամուսնալուծություն կատարելու դեպքում:

Ամուսնալուծության պետական գրանցման դիմում կարող է ներկայացվել, եթե՝

1) ամուսնությունը, որը լուծվում է, գրանցվել է Հայաստանի Հանրապետության ՔԿԱԳ մարմիններում կամ Հայաստանի Հանրապետության հյուպատոսական հիմնարկներում,

2) ամուսնությունը, որը լուծվում է, գրանցել է օտարերկրյա պետությունը, եւ Հայաստանի Հանրապետությունն իրավասու է լուծելու այդ ամուսնությունը երկկողմ կամ բազմակողմ միջազգային պայմանագրի հիման վրա:

ՀՀ արդարադատության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ամուսնալուծության պետական գրանցումը կատարվում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում: Դիմումները գործակալություն են ներկայացվում էլեկտրոնային եղանակով կամ սպասարկման կենտրոնների միջոցով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ News.am-ի

Սեպտեմբերի մեկը մշտապես տպավորիչ ու հույզերով լի օր է հատկապես առաջին դասարանցիների համար: Մաղթենք փոքրիկներին, որ այսուհետեւ այդ հուզումները միայն ուրախության պատճառով լինեն:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 9 + 14 +30 + 34
Կոտայքի լեռներ	+ 9 + 14 +30 + 33
Կոտայքի նախալեռներ	+17 + 19 +33 + 35
Գեղարքունիք	+10 + 14 +28 + 33
Լոռի	+10 + 15 +29 + 33
Տավուշ	+16 + 20 +34 + 37
Արագածոտնի լեռներ	+ 9 + 14 +30 + 33
Արագածոտնի նախալեռներ	+16 + 20 + 34+ 37

Արարատ	+18 + 22 +36 + 38
Արմավիր	+17 + 21 +36 + 38
Վայոց ձորի լեռներ	+ 9 + 14 +30 + 33
Վայոց ձորի նախալեռներ	+17 + 21 + 36+ 38
Սյունիքի հովիտներ	+19+ 24 +35 + 38
Սյունիքի նախալեռներ	+12 + 17 +29 + 32
ԼՂՀ	+17+ 23 +32 + 35
Երեւան	+24 + 27 +36 + 38

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **1.9.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*